«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումըառարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հարությունյան Ռոզա

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 10 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն.....3

2. Համատեքստ և գրականության ակնարկ.....4

3. Հետազոտության ընթացք և տվյալների հավաքագրում.....5

4. Տվյալների մշակում և վերլուծություն.....13

5. Եզրակացություն.....16

6. Գրականության ցանկ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության որդեգրած նոր ռազմավարությունը, ի թիվս այլ նպատակների, միտված է առանցքային մեկ նպատակի՝ ձևավորել սովորողների այն ութ կարողունակությունները, որոնք առաջարկում է Հանրակրթության պետական նոր չափորոշիչը: Մեկ անգամ ևս հիշենք, որ միջնակարգ կրթության կարողունակություններն են՝ լեզվական գրագիտություն, սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, թվային և մեդիա, մշակութային, մաթեմատիկական և գիտատեխնիկական, տնտեսական կարողունակություններ: Հարկ է նշել, որ կարողունակությունների ձևավորումը և զարգացումը երկարատև գործընթաց է, որը չի սահմանափակվում մեկ կամ երկու թեմայի կամ մեկ առարկայի ուսումնասիրության շրջանակներում: Պարզապես այստեղ մենք կանգ կառնենք մեր ընտրած թեմաների շրջանակում մշակված առաջադրանքների միջոցով որոշակի կարողունակությունների ձևավորման գործընթացը խթանելու սկզբունքի վրա: Կփորձենք պատասխանել կարևոր մի հարցի՝ ինչպես տարբերել, ձևավորել և զարգացնել այն հմտությունները և ունակությունները, որոնք անհրաժեշտ են 21-րդ դարի սովորողին: Թեմատիկ պլանավորման, միջառարկայական դասեր կազմակերպելիս, տարաբնույթ տեքստեր կազմելիս, գնահատման առաջադրանքներ մշակելիս անհրաժեշտ է առաջնորդվել հենց այս հարցի պատասխանի որոնմամբ և համապատասխանաբար կարողունակությունների զարգացման միտումով, այսինքն՝ առաջադրանքները, ուսուցչի համար մշակված մեթոդները հիմնականում բխեցնել այս կարողունակությունների ձևավորման և զարգացման հեռանկարով:

Հանրակրթական միջնակարգ ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները ևս միտված են յոթ կարողունակությունների զարգացմանը, այսինքն՝ հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Ցանկացած գիտելիք մնում է լոկ իմացություն, եթե այն չի կիրառվում կյանքում, առավել ևս այդ իմացությունից նոր , առավել անհրաժեշտ իրողություն չի ծագում:

Ստեղծարարության ՝ որպես մարդու էությունից բխող կարևորագույն մտածողության զարգացումը ուսումնառության հենակետերց է. դրա զարգացումը ուսումնական գործընթացի վերջնակետը պետք է լինի: Եվ պատահական չէ , որ Բլումի- Անդերսոնի տաքսոնոմիայի ամենավերին աստիճանում հենց սովորողի մեջ ստեղծագործության ձևավորումն ու զարգացումն է: Ցանկացած թեմա ուսումնասիրելիս որպես վերջնարդյունք պետք է դիտարկել նաև սովորողի ստեղծագործ մտքի զարգացման հնարավորությունն ու անհրաժեշտությունը:

Իհարկե , որոշ մտածողներ կարծում են , որ ստողծագործական մտածողությամբ ոչ բոլոր մարդիկ են օժտված: Բայց դա այդպես չէ: Բոլոր մարդիկ էլ ունեն ստեղծագործական մտածողություն: Ինչպես յուրաքանչյուրս կարող ենք կարդալ, գրել, հաշվել, այնպես էլ կարող ենք ստեղծագործել, քանի որ այն նախ և առաջ ենթադրում է արժեքավոր և ինքնատիպ գաղափարներ առաջադրելը: Օժտված լինել ստեղծագործական մտածողությամբ նշանակում է շատ գաղափարներ հղանալ և ունենալ ճկուն միտք: Ստեղծագործականությունը բխում է մարդու երևակայությունից, որը նրա ներքին կարողությունն է, և որով օժտված են բոլորը: Ստեղծագործելը հենց ենթադրում է երևակայության կիրառումը կյանքում:

Ինչպես նկատեցինք, վերը թվարկված կարողունակությունների շարքում ընդգրկված էր նաև սովորել սովորելու կարողունակությունը, որը միտված է սովորողի ինքնուրույն սովորելու կարողության զարգացմանը: Գիտատեխնիկական այս դարաշրջանում շատ կարևոր է սովորողի մեջ հատկապես այս ունակության ձևավորումը: Ինչու՞: Ուսուցիչն այսօր ընդամենը տեղեկատվության և գիտելիքի աղբյուրներից մեկն է: Այսօր սովորելու աղբյուրները շատ են: Եվ աշակերտն ունի այդ բոլոր հնարավորությունները: Սակայն մինչև դրանցից օգտվելը սովորողը պետք է կարողանա կողմնորոշվել տեղեկատվության դժվար կառավարելի հոսքում և ճիշտ օգտվել իրեն ընձեռված աղբյուրներից: Նա պետք է կարողանա նախ գնահատել իր ունակություններն ու հնարավորությունները և դրանք ուղղել իրեն անհրաժեշտ տեղեկատվության և գիտելիքի ձեռքբերմանը: Ինքնուրույն մտածողության և աշխատելու կարողության զարգացումը սովորողին կդարձնի համարձակ, ինքնաբավ, նա վստահություն ձեռք կբերի սեփական ուժերի նկատմամբ և հեշտությամբ կկողմնորոշվի բարդ իրավիճակներում՝ փորձելով գտնել ինքնատիպ լուծումներ: Աշակերտի մեջ ինքնուրույնության ձևավորումը կհանգեցնի նրա մեջ ստեղծարարարության վերհանմանը : Եվ այս կարևոր առաքելությունն իրականացնելու համար պետք է մշակեն

համակարգված մոտեցումներ, որոնց հիման վրա էլ հարկավոր է ստեղծել այնպիսի առաջադրանքներ, վարժություններ, նախագծային աշխատանքներ, որոնք մեծապես կնպաստեն երեխայի ինքնուրույն աշխատելու և ստեղծագործաբար մտածելու կարողությունների ձևավորմանը:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների առկայության պայմաններում մեծ խնդիր է աշակերտների մոտ զարգացնել ստեղծարարությունը,որպեսզի նա կարողանա ստեղծագործ մտածել, ոչ ստանդարտ որոշումներ կայացնել:Այսօր պահանջված են ուրույն մտածողություն ունեցող ,ստեղծագործ, վառ երևակայությամբ օժտված անձինք,ովքեր դժվարին իրավիճակում փորձում են գտնել հնարավորություններ,ունեն ինքնազարգացման և առաջընթացի մեծ ձգտում:Ստեղծա գործական կարողությունները բնորոշ են ցանկացած անհատի: Դպրոցահասակ երեխաները պետք է ոչ միայն տիրապետեն դպրոցական ծրագրային նյութին, այլև կարողանան այն ստեղծագործաբար կիրառել, լուծում գտնել ցանկացած խնդրի:Իսկ դա հնարավոր է միայն մանկավարժական նպատակային գործունեության արդյունքում:

Մանկավարժները պետք է կարողանան կիրառել սովորողների համար օգտակար և արդյունավետ մեթոդներ:

Հետազոտության նպատակն է դիտարկել հայոց լեզվի և գրականության ժամերին աշակերտների ստեղծագործական ունակությունները զարգացնելու հնարավորությունները, նրանց մոտ ձևավորել, զարգացնել բառապաշարը,կապակցված խոսք կառուցելու ունակությունները,զարգացնել երևակայությունը,պատմելու, վերապատմելու կարողությունները,արտահայտիչ խոսքի ձևավորումը, քննադատական մտածողություն զարգացնելուկարողունակությունը:

Նպատակին հասնելու համար իրագործվել են հետևյալ խնդիրները.

- Աշակերտների մոտ զարգացնել ստեղծարարությունը
- Փորձարկել և խթանել աշակերտների երևակայական ներուժը,որպես ունակությունների զարգացման գլխավոր գործոն
- Արթնացնել աշակերտի ստեղծագործելու ցանկությունը, քանի որ ստեղծագործական մտածողությունը թույլ է տալիս ձևավորել յուրօրինակ մոտեցում

մարտահրավերներին դժվարություններ հաղթահարման հարցում և յուրօրինակ լուծումներ՝ ծագող խնդիրների և հարցերի նկատմամբ: Օգնում է մտածել և ստեղծել յուրօրինակ գաղափարներ:

ՀԱՄԱՏԵՔՍՏ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ստեղծագործության զարգացման, ինչպես նաև աշխատանքում սովորողների ու աշխատողների ստեղծարար մոտեցման դրսևորման կարևորությունը բազմիցս նշվել և կարևորվել է Տ.Բյուզենի, Պ.Տորրենսի, Ռ. Շտենբերգի աշխատություններում, որոնք առավելապես անդրադարձել են ստեղծարարության հոգեճանաչման և զարգացման հիմնախնդիրներին՝ վերլուծելով և առաջարկելով այնպիսի մեթոդներ, որոնք թույլ կտան ոչ միայն հետազոտել անձի ստեղծարարությունը, այլև ուղղորդել վերջինիս զարգացմանը և նպաստել նրա դրսևորմանը:

Ստեղծարարության էությունը դիտարկվում է Լ.Գիլֆորդի, Ֆ.Վիլյամսի, Ա.Գրեցովի և այլոց հայեցակարգերում: Ա.Գրեցովի գրքում առանձնացված են ստեղծագործ անձին բնորոշ առանձնահատկությունները: Դրանք են՝ ինքն իրեն որպես ստեղծագործ անձ ընկալելը, յուրօրինակությունը ,անկախությունը,ռիսկի հակվածությունը, եռանդը,անհասկանալի և բարդ երևույթների նկատմամբ հետաքրքրությունը, նորի հանդեպ ընկալունակությունը, միայնության պահանջը, ինստրուկցիան:

Ամերիկյան հետազոտող–մանկավարժ Պոլ Տորրենսը իր <<Ստեղծարար գնահատման մեթոդիկա>> աշխատության մեջ նշել է, որ ստեղծարարությունը ոչ թե հատուկ,այլ ընդհանուրկարողություն է ,որը հիմնվում է ընդհանուր ինտելեկտի, անձնային որակների և արդյունավետ մտածողության կարողության վրա:

Անհատական հոգեբանության հիմնադիր Ա. Ադլերը կարծում էր, որ յուրաքանչյուր մարդ ունի ստեղծագործական ուժ, որի շնորհիվ կարող է կառավարել սեփական կյանքը: Նրա ստեղծագործականության կոմպենսացիոն տեսությունը, գիտությունը, արվեստը և մշակույթի այլ ոլորտներ դիտում է որպես մարդու սեփական թերությունների կոմպենասացիայի հնարավորություն:

Ստեղծարարությունը՝որպես խոսքային հատկություն, դրսևորվում է խնդիրը յուրօրինակ տեսնելու մեջ: Այսպիսով, կարող ենք նշել,որ ստեղծարարությունը ուսումնական գործընթաց է ,որի նպատակը ստեղծարար մարդ ձևավորելն է, ով հավատում է իր ուժերին,վստահում է շրջապատին , ողջ աշխարհին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

Հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ 6- րդ դասարանը : Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի մայրենի լեզվի դասագրքում ՝ <<Ես և իմ ընտանիքը>> խորագիրը կրող բաժնում , զետեղված է Հրանտ Մաթևոսյանի <<Հացը >> պատմվածքը:

Նպատակ եմ դրել աշակերտների մոտ արթնացնել ստեղծագործելու ցանկությունը, կապակցված խոսք կազմելու հմտությունը: Փորձել եմ տեքստի ուսումնասիրության վերոթվարկյալ սկզբունքների իրականացումը ցույց տալ Հրանտ Մաթևոսյանի այս պատմվածքի ուսուցման օրինակով: Ուսուցումը կարելի է կազմակերպել <<Քննադատական մտածողության զարգացումը գրելու և կարդալու միջոցով>> տեխնոլոգիայում տարածում գտած ԽԻԿ (խթանում- իմաստավորում-կշռադատում) համակարգով:

Խթանման փուլում կարելի է կիրառել <<Մտագրոհ>> մեթոդը: Գրատախտակին կամ մեծ պաստառի վրա գրում ենք ***հաց*** բառը: Սովորողներն ասում են այս բառի ազդեցությամբ իրենց մտքում ծնված ցանկացած բառ կամ արտահայտություն: Բոլորի ասածներն անխտիր գրանցվում են ***հաց*** բառի շուրջը՝ առանց մեկնաբանելու կամ քննադատելու: Երբ այլևս ասելիք չի մնում, փորձում ենք խմբավորել գրանցված մտքերը:

Խթանման փուլում տեղի է ունենում սովորողների իմացության վերհանում, ներքին ուժերի կենտրոնացում, հոգեբանորեն նախապատրաստում պատմվածքի ուսումնասիրության համար: Խմբավորման միջոցով էլ ընդհանուր հայտարարի են բերվում սովորողների դատողությունները և մտքերը ***հաց*** հասկացության շուրջ: Հոգեմտավոր նախապատրաստական աշխատանքից հետո անցնում ենք պատմվածքի ուսուցման հիմնական փուլին՝ իմաստավորմանը:

Պետք է նկատի ունենանք մի կարևոր հանգամանք, որ պատմվածքը, ընդհանրապես գեղարվեստական խոսքն ունի պատկերային-արտահայտչական ենթախորքեր, որոնք առաջին հայացքից , հատկապես անվարժ ընթերցողի համար, կարող են ակնառու ձևով չդրսևորվել: Այդ է պատճառը, որ պատմվածքի ուսուցումը հեղինակի, սովորողի և դասավանդողի եռակողմ ներդաշնակ գործունեություն պիտի դիտել: Ընդ որում՝ վարպետ

դասավանդողը երբեք չի թերագնահատում սովորողի դերն ու նշանակությունը գեղարվեստական խոսքի ուսումնասիրության ընթացքում, քանի որ սովորողները հաճախ կարող են զարմացնել իրենց գյուտերով: Բացի դրանից՝ տեքստի ուսումնասիրության ընթացքում դասավանդողը հարցադրումներ անողի և ուղղորդողի դերով է հանդես գալիս, իսկ վերլուծությունները կատարում են սովորողները:

Իմաստավորման փուլը կարելի է սկսել ընթերցանության որևէ մեթոդով, ասենք՝ <<Կանխագուշակման աղյուսակ>> կամ կանգառներով և ուղղորդված հարցադրումներով ընթերցանություն: մեկ անգամ ընթերցելուց հետո կիրառվում է տեքստային աշխատանքի մեթոդը:Կարելի է սովորողներին աշխատեցնել խմբերով՝ յուրաքանչյուր խմբի տալով տեքստի ուսումնասիրության որոշակի առաջադրանք: Առաջադրանքները կարելի է գրանցել թերթիկների վրա, որ հետո՝ քննարկման ժամանակ, առավել հետաքրքիր լինի միմյանց լսելը:

<< Մայրենի 6 >> դասագրքում պատմվածքից հետո տրված են բառային և տեքստային բազմաբնույթ առաջադրանքներ: Դասավանդողը կարող է ուղղակի գրել առաջադրանքի համարը թերթիկի վրա և տրամադրել խմբին: Պետք է ասել, որ դասագրքում առաջա-դրանքները կազմված են տեքստի ուսումնասիրության վերոհիշյալ սկզբունքների հի-ման վրա:

Տեքստի ուսումնասիրությունը բոլոր երեք սկզբունքների համաձայն կազմակերպելու համար դասավանդողը կարող է սովորողներին բաժանել վեց խմբի: Երկու խումբը կաշխատեն պատմվածքի լեզվառճական յուրահատկությունների բացահայտման ուղղությամբ, երկուսը՝ բովանդակային վերլուծության, իսկ մյուս երկուսը՝ անհատական ընկալման խթանման ուղղությամբ: Սակայն, խմբերով տեքստի շուրջ կարելի է աշխատեցնել այն դեպքում, երբ սովորողները տեքստն ինքնուրույն վերլուծելու որոշակի նախապատրաստություն ունեն արդեն:

<<Մտագրոհ>>-ի ընթացքում շեշտադրումը ***հաց*** բանալի բառ-հասկացությունն էր: Իմաստավորման փուլում այս հասկացության դրսևորումը պիտի գտնեն պատմվածքի տեքստում: Դասավանդողը հարցադրումները և առաջադրանքներն այնպես պիտի կազմի, որ սովորողները կարողանան ինքնուրույնաբար գտնել հացի ստեղծման ար-

ծարծումները պատմվածքում: Ընդ որում՝ աշխատանքի առաջին փուլում բոլոր խմբերը այս հարցը կքննարկեն տեքստային օրինակների հիման վրա, բայց տարբեր դիրքորոշումներից: Այսպես՝ լեզվաոճական քննություն անցկացնող խմբերը պիտի շատ ուշադիր կարդան և գտնեն այն բառերը, արտահայտությունները, որոնք հենց հացի ստեղծումն են նշում, բայց ոչ ուղղակի ձևով:Բովանդակային վերլուծություն կատարողները պիտի քննեն հերոսներից յուրաքանչյուրի դերը հացի, այսինքն՝ բարեկեցության ստեղծման գործում: Իսկ մյուս երկու խմբերը նախ իրենց անհատական ընկալումները կգրանցեն , ապա խմբով կքննարկեն գրառումները:

Պատմվածքն սկսվում է առաջին հայացքից շատ սովորական թվացող նախադասություններով. << Իմ հայրիկն կացինն առել, գնում էր գոմ սարքելու: Իմ մայրիկը գոգնոցը կապել, գնում էր հանդ՝ կարտոֆիլ հավաքելու: Իմ հորեղբայրը եղանն ուսել, գնում էր սարերում խոտ դիզելու>>: Ինչու՞ հեղինակը մեկ նախադասությամբ չի ներկայացրել այս երեք մեծահասակի, այսինքն՝ հաց արարողների գործողությունները: Այսպիսի հարցադրումը մտորումների տեղիք է տալիս , որից հետո սովորողները սկսում են դատողություններ անել և մեկնաբանել: Նրանք փորձում են մեկ նախադասությամբ հաղորդել այս միտքը: Սակայն շատ արագ հրաժարվում են դրանից, քանի որ լավ են հասկանում , որ առաջին հայացքից սովորական թվացող այս նախադասությունները պայմանավորում են պատմվածքի ողջ ասելիքը: Շարունակության մեջ մենք տեսնում ենք չորրորդ հերոսին.<< Բակում՝ արևի տակ, ես նստել էի կոճղին և հաց ուտելով՝ կարդում էի քաջագործությունների մասին մի գիրք>>: Սովորողները հատուկ ուշադրություն են դարձնում <<հաց ուտելով>> արտահայտությանը: Հեղինակը մեզ նախապատրաստեց. Ուրեմն այս երեքը տքնում են այս միակ <<հաց ուտողի>> համար:

Բայց պետք չէ շտապել, որովհետև նա, ով մեզ պատմում է այս պատմությունը, անմիջապես վրա է բերում , որ դպրոցում հայերենից ես պայծառ գնահատականներ էի ստանում ռուսերենից, մաթեմատիկայից, աշխարհագրությունից, բոլոր առարկաներից ես ստանում էի պայծառ գնահատականներ: Այս հատվածում հատուկ ընդգծված է <u>պայծառ</u> ածականը գերազանցներ բառի զուգորդությամբ: Ի՞նչ ասել է <<պայծառ գերազանցներ>>. ինչու՞ հեղինակն այլ մակդիր չի ընտրել: Սովորողներին

առաջարկվում է փոխարինել պայծառ բառը դրա հոմանիշներով՝ փայլուն, շողուն, լուսավոր , լուսեղ և այլն: Սակայն սովորողները հրաժարվում են դրանցից: Նրանք միաբերան ասում են, որ հեղինակը շատ տեղին է գործածել պայծառ բառը:

Խոսում են նաև <<գերազանց>> բառի մասին, որը չնայած ածական է, բայց այստեղ ստացել է հոգնակիակերտ վերջավորություն և գործածվել է որպես գոյական: Երևի հեղինակն ուզում էր ասել՝ գերազանց գնահատականներ: Սա ևս դառնում է քննարկման առարկա. Ինչու՞ է հրաժարվել գնահատական կամ միավոր բառերից և կիրառել է փոխանունություն: Սովորողները շատ ճիշտ նկատում են, որ գերազանցներ ձևը ուրիշ խոսք է հաղորդում ամբողջ ասվածին: Գնահատական կամ միավոր բառերը գուցե իմաստային առումով խախտեին պատմվածքի ենթիմաստը, թուլացնեին պատումի ասելիքի կշիռը:

Ուսուցիչն առաջարկում է պատմվածքի այլ հատվածներում գտնել <<պայծառ գերազանցներ>> արտահայտությունը: Նրանք, բնականաբար, ուղղակիորեն այդ բառակապակցությունը չեն գտնում, բայց հայտնաբերում են դրա արտահայտությունը երրորդ հատվածի ավարտին, երբ տղան առանց խոզերը փնտրելու և գտնելու վերադառնում է տուն. <<Հավերի հարցը մայրիկին է վերաբերում , թող մայրիկն էլ ստուգի՝ ուրուրը հավը թռցրե՞լ, թե ՞ չի թռցրել,-մտածեցի ես:-Աշխարհագրության իմ դասը գիտեմ, պատմության իմ դասը գիտեմ, մաթեմատիկայի իմ խնդիրը…>>:Տղայի լավ սովորելու մասին մի անգամ էլ ակնարկվում է , երբ հայրը օրվա ծանր աշխատանքից գալիս է տուն, նրա մեջքը ցավում է , խոզերը չեն գտնվել, բայց ուրախ է, ժպտում է . պատմության ուսուցիչը գովել է տղային:

Հետաքրքիր է, որ հաց ստեղծող եռյակին միանում են նաև ուսուցիչները, որոնք կիրակի օրով օգնել են գոմ կառուցող հորը: Այս մանրամասնությունը ավելի է շեշտում տղայի անբանությունը և <<պայծառ գերազանցների>> սնանկությունը:

Շարունակվում է տեքստի լեզվաոճական վերլուծությունը, և ուսուցիչը սովորողներին առաջարկում է նորից կարդալ պատմվածքը և ասել, թե հացի, այսինքն ՝ բարեկեցության ստեղծման էլ ինչ լեզվական դրսևորումներ կան պատմվածքում:

Սովորողներին առաջարկվում է հիշել, թե տարվա որ եղանակն է նկարագրվում: Նրանք

առանց գրքին նայելու միաբերան ասում են աշուն:Առաջարկվում է մի անգամ էլ ուշադիր կարդալ աշնան նկարագիրը.<<Մեր տան քիվի ծիծեռնակները երկնքի կռունկների հետ չվել գնացել էին: Այգու և անտառի վրա խշշալով աշուն էր իջնում>>: Սովորողները կարդում են այս կամ այն նախադասությունը , քերականորեն վերլուծում, ապա բառերը դիտարկում են միմյանց հետ ունեցած կապերի համադրությամբ: Բացատրում են քիվ բառը, խոսում են այն մասին, թե ինչու՛ ծիծեռնակների մասին ասում է, որ երկնի կռունկների հետ են չվել. սա ինչ կարող է նշանակել:Սովորողներից յուրաքանչյուրն իր տեսակետն է ներկայացնում. բոլոր կարծիքներն էլ խրախուսանքով և հարգանքով են ընդունվում: Ապա մի քանի անգամ կարդում են երկրորդ նախադասությունը, և բոլորն էլ ինչ-որ յուրահատուկ շեշտով են արտասանում խշշալով բառը: Նախ ի՞նչ բառ է, ի՞նչ խոսքի մաս, ի՞նչ է ցույց տալիս, ուղի՞ղ թե փոխաբերական իմաստով է գործածված: Ինչու՞ է հեղինակը գործածել այս բնաձայնությունը: Սովորողներին առաջարկվում է ասել, թե ինչ երևույթներ նկարագրելու համար կարելի է գործածել ձայն նշանակող այս բառը: Հնչում են տեսակետներ ՝ ծառերն են խշշում, թփերը կարող են խշշալ, պարկից դատարկվող հացահատիկը, գարին կարող է խշշալ և այլն: Սովորողները մի պահ կարկամում են իրենց գյուտից. Հացահատիկը , իհարկե հացահատիկը խշշոցով լցվում է աղացի մեջ, որ ալյուր դառնա, որից հաց են թխելու:

Քննում են նաև , թե ինչու է հեղինակը աշնան մասին ասում՝ <<խշշալով աշուն է իջնում>>: Սովորողները սկսում են մեկ առ մեկ նկարագրել աշնանը կատարվող փոփոխությունները և ապացուցում , որ հեղինակը տեղին է գործածել այս բառը:

Այնուհետև նրանց առաջարկվում է նորից կարդալ պատմվածքը. Կիրառվու՞մ է այդ բառը պատմվածքի հաջորդ հատվածներում: Նրանք գտնում են այդ բառի ՝ արմատի կրկնությամբ կազմված ձևը. <<Խաշամը խշխշում էր խլացնելու չափ ուժգին ու չոր: Այդ խշխշոցն էր , երբ վազում էի. իմ ականջներում միայն այդ խշխշոցն էր>>: Ինչու՞ է հեղինակը խշշալ-ը չի գործածվել, այլ այդ բառի բազմապատկական ձևն է նախընտրել: Ընդ որում է նախադասության սկզբում խշխշում էր բայը, իսկ շարունակության մեջ ՝ գոյականական ձևը ՝խշխշոցը, միայն այդ խշխշոցը: Սովորողները սկսում են դատել. Աշնան համար ճիշտ չէր լինի կիրառել խշխշալ բայը: Իսկ խաշամի դեպքում , որը

հասնում էր մինչև տղայի ծնկները, առավել դիպուկ է խշշալը:

Կարդալով պատմվածքի շարունակությունը՝ սովորողները նորից են հանդիպում այդ բառին, բայց այս անգամ ոչ թե դրա բայական , այլ գոյականական ձևին. << Հեռավոր թույլ խշխշոց էր լսվում: Ես հայացքս գրքից բարձրացրի և ականջներս բացեցի.խշխշոցը շատ ուժեղ էր և շատ մոտիկ>>: Սովորողները սկսում են քննարկել, թե ինչու առաջին նախադասության մեջ հեղինակն ասում է , որ թույլ խշշոց է լսվում, իսկ շարունակության մեջ խշխշոցը ուժեղ էր: Պատճառն այն էր, որ տղան պակել էր ականջները, ձայներ չլսելու համար: Բայց մի բան էլ կա.սովորողները գլխի են ընկնում, որ խշխշոցի հեղինակները խոզերն են , որոնք ևս իրենց կյանքի գնով հաց արարողների բանակում են գտնվում: Այնինչ տղան ոչ միայն ինքը չի գնում խոզերը բերելու , այլև շանն էլ հանդարտեցնում և կաշառում է՝ տալով նրան հաց և հավի ոսկորներ:

Սովորողները նկատում են, ո այդ *խշխշոց*-ը վերջում դառնում է խռպոց. Դրանք խոզերն են , որ տղային ասում են իրենց տեղը: Բայց տղան վերադառնում է տուն՝ դեպի իր տաքուկ անկյունը: Նա հացի արարման մասնակիցը չէ:

Երկրորդ հատվածը սկսվում է դարձյալ աշնան նկարագրությամբ: Դասավանդողն առաջարկում է մեկ անգամ էլ ուշադիր կարդալ և գտնել այն բառը, որը այդ մեկ պարբերության մեջ անընդհատ կրկնվում է : Այդ բառը մեղմ ածականն է: Առաջին նախադասության մեջ. << Աշնան արևը մեղմորեն ջերմ էր>>: Սովորողները վերլուծում են նախադասությունը շարահյուսորեն և ձևաբանորեն , որ մեղմ ածականը դարձել է մակբայ՝ ստանալով *–որեն* վերջածանցը: Ցույց է տալիս գործողության կատարման ձևը: Հետաքրքիր է, որ այս նախադասության մեջ մեղմորեն մակբայը դրվել է ջերմ էր բաղադրյալ ստորագյալի վրա՝ մեղմորեն մեղմ էր: Հնարավո՞ր է , որ այլ բառակապակցությամբ փոխարինել, ասենք տաք էր, շատ տաք չէր, մի քիչ շոգ էր, մեղմորեն տաք էր: Սովորողները միանշանակ մերժում են այս բոլոր տարբերակները, քանի որ սկսել են զգալ գրողի նուրբ վարպետությունը բառերն իրար հետ կապելու, բառերը << խոսեցնելու>> առումով:

Աս նախադասությունից հետո գալիս են մյուսները, որոնց մեջ մեղմ ածականը կիրառվել է տարբեր երևույթներ նշելու համար. << Աշնան մեղմ արևի մեջ գեղեցիկ էին

ծիծեռնակների լուռ բները, այգու խնձորենիները, որոնք ունեին դեռ երկու խնձոր, իմ մայրիկի մեղմ ժպիտը, շիկավուն շունը, որը պառկել էր իմ ոտքերի մոտ ու ննջում էր, աքաղաղի կարմիր կատարը և կեռասի ծառը, որ հանկարծ սկսեց ծլվլալ: Ես նայեցի այգուն, տեսա կեռասի ծառը և դեղնափորիկ թռչունին, որ այդ ուշ աշունով ծառին կեռաս էր գտել և զարմանքից ծվծվում էր: Ես հասկացա, որ աշնան մեղմ արևի մեջ ամեն ինչ թախծոտ ու գեղեցիկ է, և միակ տգեղը ես եմ, որովհետև ձևացնում եմ , թե գրքի պատճառով չէի ուզում մեր խոզերը փնտրելու գնալ>>:

Մեղմ ածականի այդպիսի հաճախակի կրկնությամբ չի նսեմացնում ասելիքը.մեղմորեն ջերմ, մեղմ արև, մայրիկի մեզմ ժպիտ, իսկ վերջում էլի մեղմ արև: Այս պարբերության վերջին նախադասությամբ ստեղծվում է աշնան բնանկար, որը անձնավորված է մեղմ բառի շնորհիվ՝ մեղմ ժպտացող մոր ու անբան սպառողի մեղմ սուր հակադրությամբ: Պատմողն ինքն էլ է զգում իր արարքի տգեղությունը, ընդհանրապես իր անձի ավելորդությունը բարիք արարողների այս մեծ բանակում: Ընդ որում՝ բարիքի կամ հացի ստեղծման գործին փութաջանորեն մասնակցում են բոլորը՝ շնչավոր թե անշունչ՝ *մարդիկ, շունը, խոզերը, արևը, աշունը, ծառերը, անտառը, բացատը, աղբյուրը, կածանը*: Ցավալին այն է, որ զգալով իր տգեղությունը՝ տղան ոչ մի կերպ չի կարողանում հաղթահարել իր ծուլությունը, ինքն իրեն և մի քանի քայլ էլ անել դեպի գրեթե գտնված խոզերը:

Հացի կամ բարեկեցության մասին խոսակցություն մեկ անգամ էլ բավական սուր շեշտերով հնչում է պատմվածքի գրեթե ավարտին: հայրը, որն ամբողջ օրն աշխատել էր, և որի մեջքը կոտրվում էր ցավից, գնում է փնտրելու և գտնելու խոզերը: Այդ գործին մասնակից է նաև շունը, որը սոսկ շուն չէ այս պատմվածքում, այլ գերծող անձ. <<Հնոցով ու փափուկ թափով մի բան անցավ մթի մեջ. շունն էր, գնում էր իմ հայրիկի հետ փնտրելու, հեռու անհայտություններում գտնելու, բերելու մեր խոզերը, որոնց միսը ամբողջ ձմեռ ես պետք է ուտեի, որոնց գնով ես պետք է հագնեի տաք վերարկու, ունենայի դահուկներ, դահուկային կոշիկներ, փափուկ վզնոց, ականջակալ գլխարկ…>>: Ինչու՞ փափուկ թափով է շունը հետևում տիրոջը. առաջարկվում է ասել փափուկ բառի հոմանիշները՝կակուղ, փամփլիկ: Ե՞րբ կարելի է գործածել փափուկ բառը փափուկ

բառն ուղիղ իմաստով՝ փափուկ բազմոց, փափուկ բարձ, աթոռ և այլն: Առաջարկվում է փոխաբերական իմաստով գործածել ՝ փափուկ հայացք, ձայն, կյանք և այլն: Ապա դառնում են պատմվածքին փափուկ թափով. ի՞նչ է ուզում ասել հեղինակը: Արդյո՞ք դա չի նշանակում, որ շունը ևս իրեն մեղավոր է զգում խոզերը տուն չբերելու համար: Կամ էլ դա չի նշում անսահման, բայց համեստորեն ծածուկ նվիրվածություն, սեր տիրոջ հանդեպ, որի մեջքը ցավում է ծանր աշխատանքից: Այդ փափուկ թափից գուցե տղան վերջնականապես հանձնվում և հասկանում է , որ արժանի չէ ուտելու մոր պատրաստած ընթրիքը.

<<-Ես հաց չեմ ուտում,-ասացի ես, մտա անկողին>>: Սկսում են քննարկել տղայի ասածը: Ուրիշ ի՞նչ կերպ կարելի է ասել սա: <<Ես սոված չեմ, ուտել չեմ ուզում, ախորժակ չունեմ >>: Սովորողները խիստ դժգոհ են այս փոփոխություններից: Նրանք հասկանում են ՝ ինչո՛ւ է հեղինակն ասում. <<ես հաց չեմ ուտում>>, կարող է քաղցած է, բայց չի ուտում. նա պատժում է ինքն իրեն, քանի որ մասնակից չէ հացի արարման գործին: Հեղինակը շատ դիպուկ է ասում. << ես հաց չեմ ուտում>>:

Այդ նույն սկզբունքով քննվում են պատմվածքում կիրառված հատուկ անունները՝ Կույր աղբյուր, Պարզ բացատ, Դիմաց անտառ, Թփուտ կածան: Սովորողները նկատում են , որ հեղինակը բոլորովին էլ պատահական անուններ չի կիրառել: Ավելին՝ սրանք բոլորը անձնավորված են, մասնակից են դեպքերին: Աղբյուրը կույր է, որովհետև թույլ է տալիս տղայի պես անբանին ջուր խմել, անտառը Դիմաց է կոչվում , քանի որ փռված է գյուղի դիմաց և իր Պարզ բացատում թաքցրել է խոզերին: Բայց բացատը շատ պարզ է . մի քանի քայլ է ընդամենը տղային բաժանում խոզերից:

Հաջորդ վերլուծությունը վերաբերում է պատմվածքում կատարվող դեպքերին և հերոսների հոգեբանության բացահայտմանը: Չնայած որ տեքստի վերլուծության վերոհիշյալ սկզբունքների միջև անջրպետ գոյություն չունի, քանի որ բառերի իմաստների, դրանց կազմության, խոսքիմասային պատկանելության և կիրառության որոնումներն արդեն բացահայտում են հերոսների հոգեբանությունը և նրանց արարքների շարժառիթները:

Հերոսների արարքների վերլուծության ընթացքում, բացի տեքստում արծարծվող

արտահայտություններից ու բառերից, մեծ տեղ է տրվում սովորողների երևակայությանը: Տղայի հայրը, մայրը, հորեղբայրը, տղան ինքը չեն երևում իրենց արտաքին նկարագրությամբ: Դասավանդողն առաջարկում է նկարագրել այս մարդկանց արտաքինը հետևյալ նպատակադրումով. << Դու ռեժիսոր ես. պատրաստվում ես կինոնկար ստեղծել <<Հացը>> պատմվածքի հիման վրա: Արտաքին ի՞նչ տվյալներ պիտի ունենան հայր, մայր, հորեղբայր, տղա խաղացող դերասանները>>: Այսպիսի առաջադրանքը հնարավորություն է տալիս մեկ անգամ էլ շատ ուշադիր կարդալու պատմվածքը, որ ամենափոքրիկ մանրամասներն աչքի առաջ ունելալով՝ կատարեն հանձնարարությունը: Երբ արտաքին տվյալները բացահայտված են , սկսում են քննել հերոսներից յուրաքանչյուրի բնավորության գծերը: Այս դեպքում ևս անհրաժեշտ է քննել ամեն մի բառ, որ հնարավոր լինի հերոսներին բնորոշ գծերը բացահայտել:

Ահա հայրը՝ աշխատասեր, բարի, քաղաքավարի. իսկ ինչից իմացանք , որ նա այդպիսին է: Սովորողները վկայակոչում են տեքստը.

Եվ իմ հայրիկն ինձ ասաց.

-Եթե ես քեզ մի բան խնդրե՞մ:

Իսկ մի քիչ ներքևում նա նեղանում է, բայց ձայնը չի բարձրացնում, այլ ասում է.

-Ներողություն,- ասաց նա,-գի՛րքդ կարդա, ներողություն:

Ապա հերթով դիտարկվում և քննարկվում են մայրը, հորեղբայրը՝ դարձյալ վկայակոչելով պատմվածքը:

Կշռադատման փուլում հիմնականում անհատական ստեղծագործական առաջադրանքներ են տրվում: Դրանցից են ՝

. գրել կարծիք պատմվածքի մասին.

. գրել տղայի՝ զոջում արտահայտող մենախոսությունը.

. գրել նամակ տղայի անունից՝ ուղղված հորը, մորը, հորեղբորը.

. պատմությունը վերաշարադրել ականատեսի անունից.

. պատմությունը վերաշարադրել տղայի ուսուցիչներից մեկի անունից.

. պատմությունը վերաշարադրել շան տեսանկյունից.

. հորինել նոր ավարտ.

. նոր հերոս կամ հերոսներ ավելացնել պատմության մեջ և շարադրել պատմությունը նոր ձևով.

.գրել բեմագիր պատմվածքի բեմադրման համար:

Ինչպես նկատելի է, այսպիսի առաջադրանքները ստիպում են աշակերտին մեկ անգամ էլ շատ ուշադիր կարդալ պատմվածքը՝ տրված հանձնարարությունը կատարելու համար: Նկատելի է պատմվածքի տեքստի վերլուծության և ինքնուրույն խոսքի ստեղծման կապը, որը դպրոցում մայրենի լեզվի և գրականության ուսուցման հիմնական նպատակադրումն է:

Ստեղծագործականության զարգացմանը մեծապես նպաստում են պատմվածքների, բանաստեղծությունների ընթերցումը, պատմելը և այլն: Դասերն ավելի հետաքրքիր դարձնելու համար կիրառել եմ բազմատեսակ մեթոդներ, հնարներ, կազմակերպել եմ ուսումնադաստիարակչական քննարկումներ և այլ աշխատանքներ:

Նախ սկզբնական դասի ընթացքում դիտարկել եմ աշակերտների հնարավորությունների, կարողությունների, ստեղծարարության մակարդակը: Առաջադրել եմ թիրախային խմբի աշակերտներին և հաջորդ դասերի ժամանակ համապատասխան գրավոր առաջադրանքների և բանավոր հարցման օգնությամբ հասել նրանց մոտ ստեղծարարության մակարդակի աճին, առաջընթացին: Դասերի ընթացքում մեծ ուշադրություն եմ դարձրել նաև աշակերտների երևակայության զարգացմանը: Ստեղծարարության ցածր մակարդակ ունեցող մի քանի աշակերտ յուրաքանչյուր դասից հետո ավելի շատ ակտիվություն էին ցուցաբերում, այդ իսկ պատճառով նրանք ավելի շատ աճ ունեցան, քան ստեղծարարության միջին մակարդակ ունեցող աշակերտները:

Սովորողների գործնական կարողությունները և հմտությունները ձևավորվում են գործնական աշխատանքների շնորհիվ, որոնք սովորողին մղում են

ստեղծագործական դաշտ:

Նրանք ստեղծագործաբար են ներկայացրել նյութը, քննարկել են , նոր վերնագիր հորինել , փոխել ավարտը , ինչպես նաև համեմատություններ արել:

Հատկապես լավ են աշխատել ցածր ակտիվություն ցուցաբերող աշակերտները, ամեն ինչ արել են , որ գովասանքի խոսքեր լսեն, անհասկանալի հարցերի դեպքում շտապել են ճշտումներ անել:

Սկզբի դասերին բոլորի մոտ էլ եղան նաև դժվարություններ, բայց դրանք հաղթահարվեցին իրենց համառության, ակտիվության, ինչպես նաև համագործակցության շնորհիվ:

Դասերին կիրառված մեթոդների շնորհիվ զարգացվել է աշակերտի ստեղծագործական կարողությունը, տեքստի վերարտադրման ունակությունը, տեքստի հորինումը, հարստացվել է նրանց բառապաշարը: Այս ամենն օգնել է աշակերտներին ընկալել տեքստի հիմնական գաղափարը, ձևավորել անհրաժեշտ բարոյական համոզմունքներ , ընդլայնվել է աշակերտների հետաքրքրությունների շրջանակը, մարզվել է ընթերցողական հայացքի ճկունությունը, սովորել են հասկանալ տարբեր հերոսների դիրքորոշումն ու մեկնաբանել վարքագիծը: Ինչպես նաև կատարված բառային և տեքստային աշխատանքների շնորհիվ հարստացել է աշակերտի բառապաշարը, զարգացել է ճիշտ ու գրագետ խոսք կազմելու ունակությունը: Դասի ոչ ավանդական ձևերի կիրառումը օգնեց աշակերտներին պատմվածքի գաղափարի ընկալման, հերոսների արարքների դրդապատճառների, մեկնաբանություններ, համեմատություններկատարելու հարցում:

Յուրաքանչյուր դասի ընթացքում կատարված աշխատանքներից հետո աշակերտները կատարել են քննարկումներ, վերլուծություններ: Յուրաքանչյուր դասին գնահատվել են և՛բանավոր հարցման, և՛ գրավոր աշխատանքների համար: Դասերի արդյունավետ անցկացման համար շատ կարևոր է հետաքրքրություն ներկայացնող

ստեղծագործական մեթոդի ընտրությունը: Այն պետք է լինի նորույթ, հաճելի և գրավիչ, խթանի նրանց հետաքրքրությունը: Ստեղծագործական աշխատանքները մեծ ակտիվություն են առաջացնում հատկապես այն աշակերտների մոտ, ովքեր ակտիվություն չեն ցուցաբերում

սովորական դասապրոցեսին: Ես հատկապես կարևորել եմ աշակերտներին սովորեցնել մտածել և նրանց մեջ սերմանել գործնական հմտություններ, որոնք նրանք կկարողանան կիրառել առօրյայում:

Պատմվածքի միջոցով ես փորձել եմ նաև աշակերտներին ուղղորդել դեպի մարդկային փոխհարաբերությունների , բարոյագեղագիտական արժեքների աշխարհ, որտեղ նա կդաստիարակվի իբրև ազատ և անկախ մտածողության տեր անհատ՝ ձևավորված գեղագիտական ճաշակով:

Պատմվածքի միջոցով ես փորձել եմ զարգացնել թիրախային աշակերտների մոտ բանավոր խոսքը,խոսքային և հաղորդակցական մշակույթը: Քանի որ լեզվի ուսուցումը բարդ գործընթաց է , այդ իսկ պատճառով ես կիրառել եմ նոր մեթոդները, որոնք նոր շունչ են տալիս ուսումնական պրոցեսին՝այն դարձնելով ավելի արդյունավետ: Նաև աշակերտների ուշադրությունն եմ հրավիրել խոսքի պատկերավորման միջոցներին, որոնք տեքստն ավելի գեղեցիկ են դարձնում:

Ելնելով կրթական համակարգում գրականություն առարկայի առանձնահատուկ դերից ու նշանակությունից՝ գրականության դասաժամերի ընթերցանությունն ու նյութի վերարտադրումը ենթադրում է կրթադաստիարակչական բնույթի մի շարք պահանջներ: Պատմվածքի միջոցով փորձել եմ նաև դաստիարակել երեխաների մեջ մարդկային բարձր արժեքներ:

Իմ ուսուցման գործընթացն այնպես եմ կառուցել, որ աշակերտը ինքնակատարելագործվի, նախաձեռնող լինի, ակտիվություն ցուցաբերի դասերին, պատասխանատու լինի, իր առջև դրված խնդիրը հասկանալու և լուծելու կարողություն ունենա: Ուստի, թեմայի ուսումնասիրման համար իմ առջև դրել եմ հետևյալ նպատակները.

- Դիտարկել մայրենիի ժամերին թիրախային աշակերտների ստեղծագործական ունակությունները զարգացնելու հնարավորությունները
- Զարգացնել խոսքի և հաղորդակցական կարողություններ
- Զարգացնել պատմվածքի հիմնական գաղափարը ըմբռնելու կարողություններ, հարստացնել բառապաշարը
- Զարգացնել երևակայությունը

Այս ամենից ես ականկալում եմ հետևյալ վերջնարդյունքները.

Աշակերտը կկարողանա.

- Կառուցել գեղեցիկ և գրագետ կապակցված խոսք
- Առանձնացնել պատմվածքի գլխավոր միտքը
- Շարունակել տեքստը , հորինի փոքրիկ պատմություն
- Համեմատել պատմվածքում և արդի ժամանակաշրջանում տեղի ունեցող դեպքերն ու իրադարձությունները
- Բնութագրել պատմվածքի հերոսներին

Դասի նպատակներն են՝

1. Զարգացնել գրավոր խոսքը
2. Հարստացնել բառապաշարը
3. Զարգացնել ստեղծագործական մտածողությունը և երևակայությունը

Կիրառել եմ հետաքրքիր մեթոդներ, աշակերտները ոգևորությամբ են աշխատել: Խթանման փուլում աշակերտներից յուրաքանչյուրը ներկայացնում է պատմվածքի մի հատվածը և նոր վերնագիր ընտրում: Այսպես ես կարողացել եմ տեսնել, թե աշակերտը ինչն է կարևորել բնագրում, ինչը՝ բաց թողել:

Իմաստի ընկալման փուլում կիրառել եմ 5ր. Շարադրանք:

Յուրաքանչյուրը գրել է իր կարծիքը, հետո կարդացել ու քննարկել են մյուսների հետ: Իսկ հետո դասարանը բաժանել եմ երկու խմբի և տվել եմ առաջադրանք: Ավարտելուց հետո նորից միասին քննարկել են:Խմբերը ձևավորել եմ այպես, որ յուրաքանչյուր խմբում լինի թույլ և միջին ընդունակություններով աշակերտ: Կշռադատման փուլում ամփոփման համար կիրառել եմ Տաձև աղյուսակ:

Առաջարկել եմ գրել պատմվածքի լավ ու վատ կողմերը: Ընդհանուր առմամբ դասն անցել է հագեցած ու ծառայել է իր նպատակին: Այս դասին անցած դասերի համեմատ ցածր ակտիվություն ունեցող երեք աշակերտների մոտ դրական փոփոխություններ կային, նրանք անցած դասի համեմատ բարձր են գնահատվել,նրանց մոտ նկատելի աճ կար:

Կշռադատման փուլում կիրառել եմ քառաբաժան մեթոդը: Այս մեթոդի օգնությամբ որոշել եմ աշակերտների գիտելիքների յուրացման աստիճանը:Կազմել եմ աղյուսակ և հանձնարարել, որ լրացնեն.

ա/ Ինչ տեսա,

բ/ Ինչ լսեցի,

գ/ Ինչ զգացի,

դ/ Ինչ սովորեցի:

Ավարտելուց հետո կատարվում է քննարկում:Այս մեթոդով դասն ամփոփվեց:

Աշակերտներից մի քանիսը գնահատվեցին:

Գնահատման արդյունքում նկատել եմ, որ ցածր ակտիվություն և ստեղծարարության թույլ մակարդակ ունեցող աշակերտները ավելի մեծ աճ են գրանցել նախորդ դասերի համեմատությամբ:

Կարող եմ ասել, որ հասել եմ իմ առջև դրված նպատակի իրագործմանը և ստացել բավարար վերջնարդյունք:

Տվյալներիմշակում և հավաքագրում

Յուրաքանչյուր հետազոտական աշխատանք ունի վերլուծության առանձնահատկություններ: Աշխատելով 6-րդ դասարանի աշակերտների հետ, բացահայտելով նրանց թույլ և ուժեղ կողմերը, այս դասի համար սահմանել եմ նպատակներ և այդ նպատակներին հասնելու համար կիրառել եմ դասի ոչ ավանդական հնարներ: Առաջին դասի ժամանակ պարզել եմ, որ կային ցածր և միջին ակտիվությամբ, ստեղծարարության ուժերով օժտված աշակերտներ: Այդ իսկ պատճառով փորձել եմ դասերին կիրառել ոչ ավանդական հնարները, նրանց մոտ ստեղծագործական կարողությունները, երևակայությունը, կապակցված խոսք կազմելու ունակությունները զարգացնելու նպատակով: Աշակերտները հորինել են պատմություններ, կատարել վերլուծություն և այլ առաջադրանքներ: Բանավոր հարցման և գործնական աշխատանքների համար գնահատվել են: Իմ հետազոտության ընթացքը դիտարկելով, յուրաքանչյուր դասիս կատարված անդրադառնալով, թիրախային խմբի աշակերտների ուսումնական վարքագիծը, թեմային յուրացումը ստուգող աշխատանքների արդյունքները գնահատելով և վերլուծելով, կարող եմ ասել, որ հասել եմ իմ առջև դրված նպատակների իրագործմանը և վերջնարդյունենրի կատարմանը: Որպես սովորողների երևակայական ներուժ՝ ստեղծագործական ունակությունների բացահայտումը գրականության դասընթացի միջոցով փորձարարական էր և հետաքրքիր: Կատարված աշխատանքի համատեքստում կիրառված ոչ ավանդական հնարներն ու մեթոդները ճիշտ էին ընտրված և ծառայել են իմ նպատակների իրագործմանը: Բոլոր աշակերտներն էլ ակտիվ մասնակցություն են ցուցաբերել դասերին, կատարվել են բանավոր և գրավոր հարցումներ:

Գնահատման արդյունքներով պայմանավորված սովորողների մոտ ստեղծարարական ունակությունների մակարդակը կարելի է գնահատել դրական, որը ներկայացրել եմ դիագրամի տեսքով: Նշել եմ թիրախային խմբի աշակերտների ստեղծարարության աստիճանը նախքան միջամտությունը և միջամտությունից հետո: Ըստ դիագրամի,

ստողծարարության ցածր աստիճան ունեցող երեք աշակերտների մոտ միջամտուան արդյունքում ավելի մեծ աճ է գրանցվել, քան միջին աստիճան ունեցող աշակերտների մոտ: Աշակերտներն էլ ակտիվ մասնակցություն են ցուցաբերել դասերին, կատարվել են բանավոր և գրավոր հարցումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսօր ուսումնառության առաջարկվող մեթոդներն ու մոտեցումները բազմազան են, դրանց մեջ կողմնորոշվելը՝ մի փոքր բարդ: Մեթոդների և մոտեցումների պատահական կիրառումը նույնիսկ կարող է վտանգել թեմայի ուսուցման և յուրացման տրամաբանությունը: Այդ է պատճառը, որ ցանկացած մոտեցում մշակելիս, հետո նաև կիրառելիս պետք է ցուցաբերել զգուշավորություն և հետևողականություն: Իմ առաջարկած առաջադրանքները տարիներով փորձակվել և իրենց դրական արդյունքն են արձանագրել: Այդ առաջադրանքները կիրառվել են դասագործընթացում, առաջարկվել են որպես տնային աշխատանքներ և այլն, այդ է պատճառը, որ ժամանակի փորձությունն անցած , ինչպես նաև դրանց օրինակով նոր մշակված առաջադրանքները ընդգրկվել են իմ աշխատանքում , և որոնք, հուսով եմ՝ մայրենիի դասերին կօգնեն զարգացնել շատ ու շատ հմտություններ, այդ թվում ստեղծագործական և ինքնուրույն աշխատելու կարողություններ:

Հետազոտության ընթացքում ես պարզեցի, որ սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության, ստեղծագործական ունակությունների զարգացումն առարկայի դասավանդման ընթացքում մեծապես կախված է ճիշտ ընտրված նպատակներից: Դրանք են՝

- Ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և գիտելիքներ ընկալումը
- Միջանձնային հարաբերությունների զարգացումը
- Աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք մշակում են գաղափարներ, կիսվում են դրանցով
- Անկաշկանդ արտահայտում են իրենց մտքերը
- Չեն վախենում սխալվելուց
- Կայացնում են որոշումներ
- Կատարում են ընտրություն և անդրադարձ

- Հասկանում են որ իրենք կարող են ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ
- Գնահատում և արժևորում են սովորածը, իրենց և մյուսների աշխատանքը
- Մշակում և փոխանակում են տեղեկատվություն
- Արտահայտելու իրենց կարծիքն ու գաղափարները տվյալ թեմայի շուրջ
- Մեծացնում է լսելու ունակությունը և իրենց խոսքի նկատմամբ վստահությունը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Այվազյան Հ., Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթականառարկանների օրվա պլանների կազման գործընթացում, Երևան,2014, 48 էջ

2.Դ.Վ. Գասպարյան.-Եր: Տիգրան Մեծ, 2016.-272էջ

3.Խաչատրյան Ս., Ֆրիդրիխ Ալբերտ հիմնադրամ, Ուսուցման ադյունավետ հնարներԵրևան ,2020, 76 էջ

4. Թամար Ալեքսանյան.- Խոսքի ուսուցումը միջին դպրոցում, էջ 77-88